



**ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիրքորոշումը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**

ՀՀ Ոստիկանության կողմից մշակվել և 2020 թվականի հունիսի 30-ին հանրային քննարկման է դրվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում (այսուհետ նաև՝ Օրենք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» [ՀՀ օրենքի նախագիծը](#) (այսուհետ՝ Նախագիծ):

Նախագծով սահմանվում է պետական տուրքի այլ, առավել բարձր դրույքաչափ նույնականացման քարտ չունենալու կամ դրանից հրաժարված լինելու դեպքում անձնագիր ստանալու համար: Մասնավորապես, Նախագծի 1-ին հոդվածի համաձայն պետական տուրքը սահմանվել է՝ «1.3 Նույնականացման քարտ չունենալու և այն ստանալուց հրաժարվելու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար՝ բազային տուրքի 8-ապատիկի չափով: Մինչդեռ Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տալու համար պետական տուրքը գանձվում է բազային տուրքի չափով:

Նախագծի 2-րդ հոդվածի համաձայն Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «ժա» ենթակետից հետո լրացվում է հետևյալ բովանդակությամբ «Ժբ» և «Ժգ» ենթակետերով.՝ «Ժբ) նույնականացման քարտ չունենալու և այն ստանալուց հրաժարվելու դեպքում օտարերկրյա պետություններում վավերական՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար՝ 73, «Ժգ) Հայաստանի Հանրապետության քաղաքացուն նույնականացման քարտ տրամադրելու (փոխանակելու) համար՝ 30: Մինչդեռ Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի ա կետի համաձայն օտարերկրյա պետություններում վավերական՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար սահմանված դրույքաչափը 65 է:

Ըստ Նախագծի հիմնավորման՝ պետական տուրքի տարբերակված դրույքաչափեր սահմանելու նպատակը այն է, որ արդյունքում առավել շատ թվով քաղաքացիներ ունենան նույնականացման քարտեր, հետևաբար հանրային կառավարման ոլորտում կգարգանա թվային ծառայությունների մատուցման գործընթացը, ավելի արագ և արդյունավետ կապահովվի քաղաքացիների նույնականացումը նրանց իրավունքների իրացման և ծառայությունների մատուցման ընթացքում:

Հանրային ծառայությունների գրեթե բոլոր ոլորտներում՝ թվային հարթակների ընդլայնման և արդիականացման ռազմավարական մոտեցումների կենսագործման, էլեկտրոնային շտեմարանների փոխգործելիության հնարավորությունների կիրառության, ռեսուրսների և ժամանակի խնայողության տեսանկյունից նույնականացման քարտերի կիրառելիության ընդլայնումը կարևոր է, սակայն ընդլայնմանն ուղղված քայլերը չպետք է լինեն խտրական և պետք է լինեն անհրաժեշտ այդ նպատակին հասնելու համար: Նախագծի



հեղինակները նույնականացման քարտերի տրամադրման և կիրառելիության խթանումը պայմանավորել են ոչ թե նույնականացման քարտ տրամադրելու դրույքաչափերի նվազեցմամբ, նույնականացման քարտի առկայություն պահանջող որևէ օգտակար ծառայության ներդրմամբ կամ նման այլ արդյունավետ միջոցով, այլ այնպիսի անբարենպաստ հանգամանքով, ինչպիսին անձնագիր ստանալու համար վճարվող պետական տուրքի՝ նույնականացման քարտ չունեցող անձանց համար նախատեսված պետական տուրքի էապես բարձր դրույքաչափն է համեմատած նույնականացման քարտ ունեցող անձանց: Նման տարբերակումը միգրացիոն հիմնավորված կարելի էր համարել այն դեպքում, երբ նույնականացման քարտի առկայություն որևէ կերպ ազդեր անձնագրի տրամադրման ընթացակարգի հեշտացման վրա, սակայն տվյալ դեպքում այդ գործոնը բացակայում է և Նախագծի հեղինակները պարզապես փորձել են «պարտադրել» ստանալ նույնականացման քարտ՝ հակառակ դեպքում «սպառնալով» անձնագրի ստացման համար առավել բարձր դրույքաչափեր:

Նախագծով սահմանված կարգավորումները խտրական են, քանի որ չկա պետական տուրքի տարբերակման օբյեկտիվ հիմք անձնագիր ստացող նույնականացման քարտ ունեցող և չունեցող անձանց միջև: Բացի այդ, որոշակի քաղաքացիների համար, որոնք իրենց կրոնական համոզմունքներից ելնելով ի վիճակի չեն կատարելու մատնադրումներ հանձնելու վերաբերյալ օրենքի պահանջը, քանի որ կրոնական համոզմունքներ ունեցող անձանց համար այդ պարտականության կատարումը անհնարին է, սահմանված չեն իրավական այլընտրանքային պայմաններ, այդ անձինք զրկած են նույնականացման քարտ ստանալու իրավունքի իրացման, հետևաբար՝ նաև իրավահարաբերություններին լիարժեք մասնակցելու հնարավորությունից<sup>1</sup>:

Սահմանադրության «Խտրականության արգելքը» վերտառությամբ 29-րդ հոդվածով սահմանվում է, որ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Սահմանադրական դատարանն իր՝ 2015թ. հուլիսի 7-ի ՍԴՈ-1224 որոշման մեջ նշել է, որ՝ «...խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ»: Մեկ այլ, 2011թ. հունիսի 7-ին կայացված թիվ ՍԴՈ-967 որոշման մեջ խտրականության արգելման վերաբերյալ նշվում է. «Սահմանադրական դատարանը գտնում է, որ ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է

<sup>1</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 8-ին կայացված թիվ ՍԴՈ-1244 որոշումը



տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է»:

Կոնվենցիայի՝ խտրականության արգելքն ամրագրող 14-րդ հոդվածով սահմանվում է, որ նույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից: ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ խտրականության արգելքի խնդիր առաջանալու համար պետք է լինի տարբերություն՝ համադրելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի միջև: Ըստ Եվրոպական դատարանի՝ ցանկացած տարբերակում կամ տարբերություն չէ, որ կարելի է խտրականություն համարել: Մասնավորապես, Abdulaziz, Cabales and Balkandali v. the United Kingdom, 28 May 1985 վճռում Եվրոպական դատարանը նշել է. «...տարբերակումը կամ տարբերությունը համարվում է խտրական, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այսինքն՝ եթե այդ տարբերակումը կամ տարբերությունը չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին»:

«Խտրականությունը էապես նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորում է՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքերի և որևէ ողջամիտ բացատրության»<sup>2</sup>:

Անդրադառնալով խտրականության հիմքերին՝ հայտնում ենք, որ Սահմանադրության 29-րդ հոդվածը ամրագրում է խտրականության դրսևորման ոչ սպառնիչ հիմքեր՝ օգտագործելով «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» եզրույթը: Այս կապակցությամբ Արա Ղազարյանը իր «Իրավական պաշտպանության եղանակները խտրականության գործերով» ձեռնարկում հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «Սահմանադրության 14.1-րդ հոդվածը սահմանում է պաշտպանված հատկանիշների բաց ցանկ (անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ), երկրորդ, ՀՀ վավերացրել է նաև Եվրոպական կոնվենցիայի թիվ 12 Արձանագրությունը, որի 1-ին հոդվածը սահմանում է խտրականության համընդհանուր արգելքը՝ անկախ հիմքից: Այս երկու հանգամանքները կարելի է վկայակոչել այն դեպքում, երբ դուք վիճարկում եք խտրական վերաբերմունք մի հիմքով, որը հստակորեն ամրագրված չէ Սահմանադրության 14.1 հոդվածով»<sup>3</sup>: Ըստ այդմ, քանի որ նույնականացման քարտ չունենալու կամ դրանից հրաժարված լինելու հանգամանքը ըստ էության չի ներառվում խտրականության մասնավոր հիմքերի՝ Սահմանադրությամբ թվարկված ոչ սպառնիչ շարքում, այլ իրենից ներկայացնում է հանգամանք, որը տարբերակված մոտեցում է ենթադրում առանց օբյեկտիվ և արդարացված հիմքի՝ կոնկրետ դեպքում ձեռնպահ կմնանք խտրականության հիմք նշելուց:

<sup>2</sup> Տե՛ս Վիրաբյանի ընդդեմ Հայաստանի ՄԻԵԴ վճիռը (թիվ 40094/05, 02.10.2012թ., § 199):

<sup>3</sup> Տե՛ս «Իրավական պաշտպանության եղանակները խտրականության գործերով», Եվրոպայի խորհուրդ, 2015թ., Արա Ղազարյան, էջ 10, հասանելի է՝ <https://rm.coe.int/168048a700>

Այսպիսով, նույնականացման քարտ չունենալու հիմքով այդպիսի անձանց նկատմամբ պետական տուրքի բարձր դրույքաչափի սահմանումը խտրական է, քանի որ նույնականացման քարտ ունեցող և չունեցող անձանց կարգավիճակների միջև չկա որևէ տարբերություն, որը կարող է անհավասար մոտեցում ցուցաբերելու արդարացված դրդապատճառ և օբյեկտիվ հիմք հանդիսանալ անձնագիր ստանալիս այդ անձանց նկատմամբ պետական տուրքի բարձր դրույքաչափի հաշվարկելիս և գանձելիս:

Հարկ է նշել, որ «Պետական տուրքի մասին» օրենքը չի սահմանում պետական տուրքերի համակարգի սկզբունքները, Սահմանադրությամբ ամրագրված խտրականության արգելքի սկզբունքը գործում է անմիջականորեն, թեև ուրոտը կարգավորող օրենսդրությունը չի սահմանում այդ սկզբունքը: Այս առումով, ընդօրինակելի է «Հարկային օրենսգիրքը», որի 3-րդ հոդվածը սահմանում է հարկային համակարգի սկզբունքները, ի թիվ այլ սկզբունքների նշված հոդվածի ի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝

3) **հավասարություն**՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը պետք է հավասարապես կիրառվեն բոլոր հարկ վճարողների նկատմամբ.

4) **խտրականության բացակայություն**՝ հարկերի ու վճարների կիրառությունը և հարկային վարչարարությունը չպետք է ունենան խտրական բնույթ՝ կախված սոցիալական, քաղաքական, կրոնական, էթնիկական, գաղափարական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված այլ գործոններից:

Վերոգրյալը հաշվի առնելով արդարացված կլինի սահմանել խտրականության բացակայության և իրավահավասարության սկզբունքները նաև «Պետական տուրքի մասին» օրենքով, որով կհստակեցվի, որ միևնույն ծառայության համար տարբեր անձնաց նկատմամբ պետական տուրքի վճարման տարբեր դրույքաչափեր սահմանվել չեն կարող:

Այսպիսով, նույնականացման քարտ չունեցող անձանց համար պետական տուրքի այլ դրույքաչափեր սահմանող դրույթները խտրական են, և այդ հիմնավորմամբ Նախագիծը պետք է հանվի շրջանառությունից:

### *Առաջարկություններ*

1. 2020 թվականի հունիսի 30-ին հանրային քննարկման դրված «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» [ՀՀ օրենքի նախագիծը](#) հանել շրջանառությունից՝ խտրական լինելու հիմքով:

2. «Պետական տուրքի մասին» օրենքում սահմանել պետական տուրքի հաշվարկման և գանձման (պետական տուրքի համակարգի) սկզբունքները՝ ի թիվս այլնի ներառելով նաև խտրականության բացակայության և իրավահավասարության սկզբունքները: